ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Հրազդան << 11 >>հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Լ.Պետրոսյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և << Կոտայքի մշակույթի կենտրոն >> ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Սիմոնյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), <<Համայնքային մշակույթի և ազատ ժամանց>> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 2 914 300 (երկու միլիոն ինը հարյուր տասնչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է ՊՈԱԿ-ի գանձապետական հաշվին:
2.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.ՊԱՅԱՄԱՆԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել՝ վերապատրաստման ձևի (առկա,հեռավար) կամ ուսուցիչների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված: Պայմանագրի փոփոխման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

3.2 Պետական մարմինը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր ծանուցելով ՊՈԱԿ-ին, եթե պարզվի որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևէ պայման:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը կազմված է երկու էջից, ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:
7.2 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ:
7.3 Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները պետք է կազմվեն գրավոր, ստորագրվեն և կնքվեն կողմերի կողմից:

8.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության

Կոտայքի մարզպետարան

Ք.Հրազդան, վարչական շենք
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900121071022
ՀՎՀՀ **03029935**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետի աշխատակազմի գլխավոր
գարտուղար՝

Լ.Պետրոսյան
/ստորագրություն/

Կ.S.

Հայաստանի Հանրապետության

Կոտայքի մարզի << Կոտայքի մշակույթի կենտրոն >>

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900128000230
ՀՎՀՀ 03008809

կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝

Ա.Սիմոնյան
/ստորագրություն/

Կ.S.